



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 010-594015

№ 12.0.02/16829-19
29» 07 2019թ.

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
(ՀԱՍՑԵ՝ ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓԱԿՈՒՂԻ 8,
112 ՍԵՆՅԱԿ)**

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

ՀՀ արդարադատության նախարարությունում ուսումնասիրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի՝ 2019 թվականի հունիսի 26-ին ՀՀ արդարադատության նախարարություն թիվ 19-35 գրությամբ ստացված ընթացիկ հաշվետվությունը: Ուսումնասիրության արդյունքներով և ընթացիկ հաշվետվության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից (այսուհետ՝ Քրեակատարողական ծառայություն) տրված տեղեկատվության հիման վրա հարկ է նշել հետևյալը.

• 2019 թվականի հունվար ամսից ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ Հիմնարկ) ընթանում են կապիտալ շինարարական աշխատանքներ, որի ընթացքում հիմնովին վերանորոգվելու են սանհանգույցները, արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցերը, ներքին ջրահեռացման համակարգը, էլեկտրալուսավորության ցանցերը: Արդյունքում կվերանա առաստաղից կոյուղաջրերի հոսքը, ինչպես նաև դեպի 6-րդ մասնաշենք գնացող


միջանցքի գարշահոտությունը, կվերանորոգվեն սանհանգույցները, կներկվեն պատերը: Կապիտալ վերանորոգման արդյունքում լուծվելու է նաև խցերի և միջանցների լուսավորության խնդիրը:

Հիմնարկի տարածքում ամսվա կտրվածքով առնվազն երեք անգամ իրականացվում են դեռատիզացիայի և մեկ անգամ դեզինսեկցիայի աշխատանքներ:

• Քրեակատարողական ծառայության կողմից կազմվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ գրասենյակային գույք (կահույք, սեղան, աթոռ և այլն) ձեռք բերելու նպատակով հողվածային վերաբաշխում իրականացնելու վերաբերյալ: Համապատասխան ֆինանսավորում ստանալու պարագայում կլուծվի նաև Հիմնարկի գրասենյակային գույքի խնդիրը:

• Տեղեկացնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած օտարերկրյա քաղաքացիները հնարավորինս իրենց հասկանալի լեզվով ծանոթացվում են իրենց իրավունքներին և պարտականություններին, հիմնարկի ներքին կանոնակարգին: Բացի այդ, հարկ է արձանագրել, որ կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքները և պարտականությունները թարգմանվել են ռուսերեն, պարսկերեն և անգլերեն, փակցվել տեսանելի վայրերում, ինչպես նաև տրամադրվել վերջիններիս: Ընդ որում, Հայաստանում օտարերկրյա պետությունների դեսպանատների և հյուպատոսական ծառայությունների հետ առկա է համագործակցություն և նրանց ներկայացուցիչների հետ համատեղ իրականացվում են ստացված դիմումների թարգմանությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՆԱՐԵԿ ԴԱԶԱՐՅԱՆ